Վերադառնալով խնայողությանը՝ նշենք, որ այն որպես սկզբունք քրեական դատավարության օրենսգրքում ամրագրված չէ: Չնայած դրան՝ ՀՀ դատական օրենսգրքի «Դատական իշխանության գործունեության սկզբունքները» վերնագրով 2-րդ գլխում նախատեսված է «Արդարադատության արդյունավետ իրականացման սկզբունքները» վերտառությամբ 16-րդ հոդված, որը սահմանում է, որ դատարանում գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով կողմերի մասնակցությամբ որպես կանոն իրականացվում է գործի դատական քննության նախապատրաստական փուլ:

Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քննությունը որպես կանոն իրականացվում է դատավարական օրենքով սահմանված պարզեցված ընթացակարգերով:

Դատական քննությունը որպես կանոն պետք է ավարտվի մեկ դատական նիստով:

Գործի դատաքննության նախապատրաստությունը և բուն դատաքննությունը պետք է իրականացվեն ողջամիտ ժամկետներում:

Խորամուխ չլինելով մեջբերված հոդվածի բովանդակության մեջ՝ կարող ենք արձանագրել, որ ՀՀ դատական օրենսգրքը արդյունավետությունը հռչակում է որպես դատական իշխանության իրականացման սկզբունք:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասն էլ սահմանում է, որ հսկողություն իրականացնող դատախազը պատասխանատու է հետաքննության և նախաքննության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության և արդյունավետության համար:

Գրականության մեջ նշվում է, որ արդյունավետությունը ենթադրում է անմիջական նպատակների իրականացում, ոչ անմիջական նպատակների իրականացում և ռազմավարություն, այսինքն՝ ուժերի և միջոցների խնայողություն²⁰:

Կարծում ենք՝ նշվածը բավարար է հակադարձելու համար գրականության մեջ արտահայտված այն դիրքորոշմանը, որ

խնայողությունը ռացիոնալության հետ որևէ կապ չունի:

Այսպիսով, խնայողությունը, որը որպես գոյություն ունեցող պահանջ միանշանակ չէր ընդունվում դատավարական ձևի տարբերակման ընդդիմախոսների կողմից, ի թիվս այլ բաղադրիչների՝ կազմում է արդյունավետությունը, որն այսօր արդեն սկզբունքի մակարդակի բարձրացված իրավական պահանջ է՝ ուղղված քրեական վարույթն իրականացնող մարմիններին:

Ինչ վերաբերում է քրեադատավարական ձևի տարբերակման ընդդիմախոսների այն փաստարկներին, որ քրեադատավարական ձևի միասնականությունը պայմանավորված է քրեական դատավարության սկզբունքների, խնդիրների միասնականությամբ, ապա հարկ ենք համարում շեշտել, որ տարբերակումը վերաբերում է ոչ թե քրեական դատավարությանը, այլ դրա ձևին: Քրեադատավարական ձևի տարբերակումը ոչ թե երկատում է քրեական դատավարությունը, սահմանում երկակի խնդիրներ ու սկզբունքներ, այլ հնարավորություն է տալիս միասնական քրեական դատավարությունն իրականացնել տարբեր ձևերով՝ միասնական սկզբունքների շրջանակներում և միասնական խնդիրների իրականացման համար: Այլ կերպ՝ քրեադատավարական ձևի տարբերակումը, որը միանշանակ հնարավոր է միասնական քրեական դատավարության պայմաններում, ենթադրում է քրեական դատավարության խնդիրների՝ տարբեր եղանակներով իրականացնելու հնարավորություն՝ գործի կոնկրետ հանգամանքներին համապատասխան: Այսինքն՝ տարբերակման դեպքում տեղի են ունենում քրեական դատավարության ձևի մեջ զեղչումներ կամ հակառակը՝ հավելումներ, կախված այն բանից, թե կոնկրետ իրավիճակում քրեական դատավարության միասնական նպատակները արդյունավետ նվաճելու համար դրանցից որն է անհրաժեշտ:

Ներկայում դատավարական ձևի տարբերակման կողմ և դեմ մոտեցումների հա-

րաբերակցությունն էապես փոխվել է: Այժմ արդեն հազվադեպ կարելի է հանդիպել մոտեցումների, որոնք ամբողջովին հերքում են դատավարական ձևի տարբերակման թույլատրելիությունը: Գիտական վեճերն այժմ արդեն կապված են հիմնականում դատավարական ձևի տարբերակման թույլատրելի սահմանների հետ:

Փաստորեն, դատավարական ձևի տարբերակման անհրաժեշտությունը ժամանակի ընթացքում ավելի հիմնավորվեց: Այն զգալիորեն պայմանավորված էր նախկին ԽՍՀՄ-ի փլուզումից հետո դրա անդամ պետություններում սկսված հասարակական կյանքի տարբեր ոլորտների, այդ թվում՝ դատաիրավական բնագավառի բարեփոխումներով, որոնք առաջ քաշեցին արդարադատության որակի նոր չափանիշներ՝ դրանով իսկ նոր խնդիրներ ու նպատակներ առաջադրելով քրեական դատավարությունն իրականացնող մարմիններին:

Ինչպես նշվում է գրականության մեջ, պոպուլիստական այն գաղափարը, թե «ոչինչ այնքան թանկ չի արժենում, որքան է-ժան արդարադատությունը», ոչ մի պետությունում անվերապահ չի ընդունվում²¹:

Ժամանակն իրոք ցույց տվեց, որ ավելի արդիականը դատավարական ձևի տարբերակման մոտեցումն է, քանի որ հիմնախնդրի առաջացումից հետո շուրջ երեքուկես տասնամյակ անց, հիմնականում դատաիրավական բարեփոխումներով պայմանավորված, նախկին ԽՍՀՄ անդամ պետությունների մեծ մասում կատարվեցին օրենսդրական փոփոխություններ, որոնք քրեական դատավարության համակարգ մտցրեցին դատավարական ձևի դիֆերենցացված տարբերակներ:

Վերոնշյալը կրկին հաստատում է այն հանգամանքը, որ դատավարական ձևի տարբերակումն օբյեկտիվ գործընթաց է, իսկ դրա ընդունելիությունը պայմանավորված է հասարակության իրավագիտակցության, իրավական մշակույթի և ընդհանրապես հասարակական զարգացման մակարդակով:

Քրեական իրավունք եւ**Դատավարութեան**

- ¹ Տե՛ս Великий Д.П. Единство и дифференциация уголовно-процессуальной формы: история, современность, перспективы: дисс. ... канд. юрид. наук. М., 2001г.- 211 էջ:
- ² Տե՛ս Строгович М.С. О единой форме уголовного судопроизводства и пределах ее дифференциации. Социалистическая законность. 9/1974г., էջ 50-53:
- ³ Տե՛ս Строгович М.С. Актуальные вопросы судебной этики // Совершенствование законодательства о суде и правосудии. М., 1985г., էջ 5:
- ⁴ Տե՛ս Строгович М.С. О единой форме уголовного судопроизводства и пределах ее дифференциации. Социалистическая законность, էջ 52.
- ⁵ Տե՛ս Каз Ц. О единстве и дифференциации уголовного судопроизводства. Социалистическая законность. 9/1975г., էջ 65:
- ⁶ Տե՛ս Строгович М.С. Курс Советского уголовного процесса. М., 1968г., էջ 52-53:
- ⁷ Տե՛ս Мартинович И. И. Формы уголовного судопроизводства и воспитательная задача суда, Правоведение-1978/3, էջ 52:
- ⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 57-58:
- ⁹ Տե՛ս Строгович М.С. О единой форме уголовного судопроизводства и пределах ее дифференциации. Социалистическая законность.9/1974г., էջ 51:
- ¹⁰ Տե՛ս Пашкевич П. Процессуальные формы уголовного судопроизводства нужно дифференцировать. Социалистическая законность.9/1974г., էջ 54:
- ¹¹ Տե՛ս Арсеньев В. Упрощение неравнозначно упрощенчеству. Социалистическая законность.3/1975г., էջ 63:
- ¹² Տե՛ս Гуляев А. Единый порядок предполагает дифференциацию. Социалистическая законность.3/1975г., էջ 65:
- ¹³ Цыганенко С.С. Дифференциация как модель уголовного процесса (уголовно-процессуальная стратегия). Сборник Материалов международной научной конференции посвященной 160-летней годовщине со дня рождения проф. И.Я. Фойницкого << Стратегий уголовного судопроизводства>>. 11-12 окт. 2007г. Отв. ред. Н.В. Радутная, Изд-во. РАП. 2008, էջ 200,,: http://www.iaaj.net/1_oldmasp/modules.php?name=Content&pa=showpage&pid=21.
- ¹⁴ Տե՛ս օրինակ՝ Оржак А. Предложения о дифференциаций заслуживают поддержки. Социалистическая законность.3/1975г., էջ 64:
- ¹⁵ Кувалдина Ю.В. Ретроспектива развития упрощенных форм производства в уголовном процессе России(с 1 января 1961г.по 1 июля 2001г.).Юридический аналитический журнал. 4(8)/2003г., էջ 97:
- ¹⁶ Якуб М. Порядок уголовного судопроизводства следует дифференцировать. Социалистическая законность.1/1975г., էջ 66-67:
- ¹⁷ Տե՛ս Рустамов Х.У. Дифференциация форм уголовного процесса (Соврем. Тенденций и проблемы совершенствования): Дисс.... д-ра юрид. наук.: Москва, 1997г. էջ 339.
- ¹⁸ Տե՛ս Сычев А.А. Дифференциация уголовно-процессуальной формы производства по делам несовершеннолетних. Автореф. Дисс. ... канд. юрид. наук. Нижегородская академия МВД России. Н. Новгород, 2009г. էջ 10.
- ¹⁹ Տե՛ս Калиновский К. Б. Быстрота (срочность) уголовного судопроизводства- есть принцип уголовно-процессуального права.// Материалы международной научно-практической конференции <<Состояние и перспективы развития правовой науки>>.Ижевск, 30-31 марта 2006г. <http://www.kalinovsky-k.narod.ru/p/2006-4.html>
- ²⁰ Տե՛ս Михайлов А.И., Соя-Серко Л.А. Соловьев А. Б. Научная организация труда следователя.Москва, Юридическая литература. 1974г, էջ 12:
- ²¹ Տե՛ս Гуценко К.Ф., Головки Л.В., Филимонов Б.А. Уголовный процесс западных государств. Под ред. Гуценко К.Ф. Издание второе. МГУ имени Ломоносова, М- 2002 г., էջ 26:

ПРОБЛЕМА ДОПУСТИМОСТИ ДИФФЕРЕНЦИАЦИИ УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОЙ ФОРМЫ

ГЕВОРГ БАГДАСАРЯН

*Советник председателя уголовного
апелляционного суда РА,
Соискатель кафедры уголовного
процесса и криминалистики ЕГУ*

Научная статья посвящена одному из актуальных проблем теории уголовного процесса—допустимости дифференциации уголовно-процессуальной формы.

Автор анализирует и сопоставляет противоположные подходы к проблеме, которые существуют в юридической ли-

тературе, потом представляет собственную точку зрения.

В результате соответствующего исследования, автор приходит к выводу, что дифференциация уголовно-процессуальной формы—есть объективная необходимость обусловленная потребностью обеспечения эффективности процесса.

Ключевые слова: уголовно-процессуальная форма, дифференциация, унификация, эффективность, процессуальная экономия.

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

**ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍԿՋԲՆԱԿԱՆ ՈՒ
ԸՆԹԱՑԻԿ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ԱՆԿԱՅՈՒՆ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ
ՀԱՍԱՐԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Տարոն ՍԻՍՈՆՅԱՆ

ԵՊՀ պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի ասպիրանտ

*«Մեր բնույթի հոգևոր և ֆիզիկական կողմերին վերաբերող փորձի ուղորտների մոտեցման յուրաքանչյուր դեպքում ժամանակն ունի որոշիչ դեր»
Ա. Ս. Էդինգտոն*

Մարդկային հասարակությունը ինքնազարգացող բաց համակարգ է և մշտապես գտնվում է փոխակերպումների, վերափոխման և կատարելագործման փուլերում: Ժամանակակակից իրականության ամենից հետաքրքիր առանձնահատկությունը սոցիալական փոփոխության հեղափոխական տեմպն է՝ պայմանավորված միջազգային հարաբերություններում, պետությունում, սոցիումում տեղի ունեցող գերարագ զարգացումներով: Այս պայմաններում ժամանակի ընթացքի գիտակցումը որոշիչ է դառնում սոցիալ-պետական զարգացումները դիտարկելիս:

Համակարգերի զարգացման գործընթացում սիներգետիկայի համար կարևորություն են ներկայացնում քառսից կարգի ու հակառակն անցումը և դրանում ընտրության դերը, այնուհետև՝ կեցությունում ցանկացած երևույթի ժամանակային չափականության ընդունումն է, ինչը չափազանց մեծ դեր է կատարում սոցիալ-պետական համակարգի՝ հետագա զարգացման ուղիների՝ ատտրակտորի ընտրության

գործում: Այդ է պատճառը է, որ «մեր օրերում գիտական հետազոտությունների հիմնական շեշտադրումը սուբստանցիայից տեղափոխվել է հարաբերություններ, կապեր, ժամանակ»¹:

Սիներգետիկայի տեսանկյունից աշխարհը բաց է և գտնվում է ձևավորման գործընթացում, այլ կերպ՝ անընդհատ էվոլուցիայի է ենթարկվում ոչ գծային օրենքներով ընտրության մեխանիզմի շնորհիվ (տեզաուրուս, դետեկտոր, սելեկտոր): Այս մշտական ձևավորումն անցյալի, ներկայի և ապագայի բարդ կապ է, որը տարբերվում է դետերմինիզմի դասական տարբերակից: Տվյալ դեպքում խոսն ինչպես անցյալի, այնպես էլ ապագայի հետ ներկայի դետերմինացման պարադոքսալ միասնության մասին է²: Սեփական ներուժն իրացնելու համակարգի ձգտումը նշանակում է պատճառի և նպատակի համընկում: Այդ պատճառով ցանկալի ապագան որոշակիացնում է (թեև ոչ կաուզալ) ներկան³:

Այստեղ չափազանց կարևորվում է քառսի կամ խիստ անկարգավորվածության դերը, քանի որ «[ք]առսը հանգեցնում է ժամանակի նետի միացմանը դրա հիմնարար դինամիկ բնորոշման մեջ: Քառսը թույլ է տալիս լուծել ժամանակի պարադոքսը»⁴:

Խոսելով նման բարդ և դժվար ճանաչելի ֆենոմենի մասին, ինչպիսին ժամանակն է սոցիալական կեցություն՝ պետք է հասկանալ դրա իրական դերն ու էությունը սոցիալական փոփոխությունների, հատկապես անցումայնության փուլում և պատասխանել այն հարցին, թե ինչ կերպ է տեղի ունենում սոցիալական համակարգի և դրա անդամների կողմից արագացող փոփո-

խությունների ընկալումը, ինչն էլ առաջացնում է ժամանակի կրճատման երևույթը: Այլ կերպ՝ սա սոցիալական քառսից կարգավորվածության անցնելու սուբյեկտիվ կողմն է:

Այսպիսով, Սանուել Կաստելի հռետորական հարցը, թե «ի՞նչ է իրենից ներկայացնում ժամանակը՝ այդ անհասանելի հասկացությունը, որը տարակուսանքների մեջ գցեց Սուրբ Օգոստոսին, մոլորության մեջ գցեց Նյուտոնին, ոգևորեց Այնշտայնին, տանջեց Հայդեգերին, և ինչպես է այն ձևափոխվել մեր հասարակությունում»⁵ արդիական է բոլոր ժամանակներում և խնդրահարույց բոլոր հետազոտողների համար:

Ըստ Հերակլիտի՝ ժամանակը մշտապես լարած ժամացույց չէ, միաչափ մեխանիզմով մեքենա չէ, այլ «քարերով խաղացող երեխա է»⁶: Սա հենց բնութագրում է ժամանակի սիներգետիկ առանձնահատկությունը: Սրանով «մեր առջև բացվում է խաղային ժամանակի պատկերը. աշխարհի հնարավորությունների մշտական փորձի պատկերը շատ մոտ է սիներգետիկայի ոգուն»⁷:

Դեռևս հատուկ և ընդհանուր հարաբերականության տեսություններից հայտնի է, որ ժամանակը համընդհանուր օբյեկտիվ երևույթ չէ, և կան ժամանակի տարբեր մակարդակներ: Առաջին անգամ ժամանակի մակարդակների գաղափարը մանրամասնվել է Ջ. Ֆրասերի աշխատությունում⁸, ով առանձնացնում էր ժամանակի գոյության վեց մակարդակ, որը համապատասխանում է մատերիայի գոյության համապատասխան վեց ձևերին՝ քվանտային, մոլեկուլյար, թերմոդինամիկ, բիոլոգիական, հոգեբանական և սոցիալական⁹: Այդ մակարդակները ոչ միշտ են համահունչ գործում: Ընդհակառակը՝ հիմնականում տարբեր ժամանակային հարթություններում են գտնվում: Իսկ երբ, օրինակ, հոգեբանական և սոցիալական ժամանակները չափազանց շատ են իրարից տարբերվում, առաջանում է սոցիալական քառսի կամ

ստագնացիայի երևույթը, ինչն էլ կազմում է սոցիալական սիներգետիկայի հետաքրքրությունների ոլորտը:

Ինչպես գիտենք, բոլոր սոցիալ-պատմական երևույթները տեղի են ունենում ժամանակի որոշակի պահի և ձգվում են ժամանակի մեջ: Ժամանակը տարածության նման սոցիալական կեցության համընդհանուր բովանդակություն է: Դրա համար սոցիալ-իրավական և պետական երևույթների ուսումնասիրության համար «[մ]ենք պետք է ըմբռնենք տարածաժամանակային հարաբերությունները բոլոր սոցիալական փոխհարաբերությունների ամբողջության մեջ անքակտելիորեն»¹⁰: Ժամանակը մարդկային իրականության անհրաժեշտ չափականությունն է, «որը բովանդակում է մեր կյանքի բոլոր ոլորտները»¹¹: Այս օնթոլոգիական փաստերը իրականում առաջացնում են էպիստեմոլոգիական հետևանքներ, քանի որ դրանք պատճառ են «սոցիալական գիտություններում ժամանակի՝ որպես առարկայի կենտրոնական դերի համար»¹²:

Ժամանակի եությունն ամենից շատն է վերաբերում սոցիալական փոփոխությանը: Հենց ժամանակի գաղափարն է բխում իրականության փոփոխվող բնույթից: Անհմար է արտահայտել և հասկանալ ժամանակն առանց հղում կատարելու որոշակի փոփոխության: Եվ հակառակը. փոփոխության գաղափարը՝ առանց ժամանակի, պարզապես չի կարող արտահայտվել: «Ցանկացած ձևավորում, փոփոխություն, գործընթաց, շարժում, դինամիկ վիճակ, գույզադրելով առկային, ներառում է ժամանակ»¹³:

Սոցիալական փոփոխության հետազոտության համար ժամանակը ոչ միայն ընդհանուր չափականություն է, այլ նաև հիմնական գործոն¹⁴: Սոցիալ-պետական սիներգետիկային վերաբերող ցանկացած աշխատանքում ժամանակը կատարում է հիմնական ու որոշիչ գործոնի դեր, և առանց դրա ըմբռնման ու ճիշտ կիրառման աշխատանքը զրկվում է գործնական նշա-

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆԵՐ

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

նակությունից, քանի որ հակառակ դեպքում սոցիումը և պետությունը միայն տարածականորեն են հետազոտվում և կորցնում են իրական դիմամիկ եությունը բացահայտելու հնարավորությունը:

Սոցիալական սիներգետիկայի ուսումնասիրման կարևորագույն խնդիրը կայունության և անկայունության անցման առանձնահատկություններն են, ինչում մեծ է «ժամանակ» կատեգորիայի դերը:

Այն, ինչ, ընդհանրապես, անվանվում է կայունություն, «մեծամասամբ վերաբերում է փոփոխության արագությանը, ինչը շատ ավելի դանդաղ է, քան դիտարկողին»¹⁵ (օրինակ՝ ավանդական հասարակությունները չափազանց դանդաղ են փոփոխվում, երբ այն չափվում և սահմանվում է արևմտյան չափորոշիչներով):

Կայունության մասին խոսելիս մտքում առաջանում է տարբերության հարաբերական չգոյություն, հարաբերականորեն երկարացված ժամանակաշրջաններում գծային զարգացումների առկայություն: «Սոցիալական կայունության մասին խոսելիս չպետք է վերացարկվել ժամանակից, քանի որ կայունությունը նշանակում է ժամանակի մեջ շարունակականություն»¹⁶: Մինչդեռ անկայունության ժամանակ խոսքը հենց սոցիալ-պետական կարգի փոփոխության մասին է, երբ դիտարկողի համար արտաքին՝ սոցիալ-պետական կարգի փոփոխությունների արագացման պատճառով այդ փոփոխությունների պատճառ-հետևանքային կապերի գիտակցումը դժվարանում է, արագանում է նաև դրանց հերթափոխը, դժվարանում է ճանաչելի լինել հենց պատճառի և հետևանքի եությունը, և արդյունքում առաջանում է ոչ գծային զարգացումների պատկերը, ինչն էլ հենց սիներգետիկ զարգացումներն է խորհրդանշում:

Իսկ ինչ վերաբերում է սոցիալական փոփոխությանը, ժամանակը կարող է ար-

տահայտվել երկու կերպ.

1. այն կարող է ծառայել որպես իրադարձությունների և գործընթացների չափման արտաքին հիմք՝ կարգավորելով դրանց քառային ընթացքը՝ ի օգուտ մարդկանց կողմնորոշվածության կամ սոցիալական գործունեության կողողինացման («քանակական ժամանակ»): Որքան ավելի է բարդանում և համալիր դառնում մարդկային հասարակությունը, այնքան ավելի են կարևոր դառնում ժամանակային կարգավորումը և կողողինացիան¹⁷,

2. կա նաև այլ ճանապարհ, որով ժամանակը կապվում է սոցիալական փոփոխության հետ. ոչ որպես արտաքին՝ սահմանագծման համար հիմք (*framework*), այլ որպես սոցիալական իրադարձությունների և գործընթացների ներքին, ներհատուկ, օնթոլոգիական սեփականություն: Սա «որակական ժամանակն է», որը բնորոշվում է սոցիալական գործընթացների բնույթով:

Հենց այստեղ է, որ, երբ քննարկվում է որևէ սոցիալական գործընթաց, այն արտահայտում է տարբեր ժամանակային որակներ.

ա. դրանք կարճ են կամ երկար (օրինակ՝ օրենսդրական բարեփոխումը և երկար ձգվող բարոյական լճացումն ու նեխումը),

բ. դրանք գործում են դանդաղ կամ արագ,

գ. դրանք բնորոշվում են ռիթմիկ կամ պատահական ընդմիջումներով,

դ. դրանք բնական կամ սոցիալական հանգամանքների միջոցներով ճեղքվում են տարբեր սուբստանտիվ որակների միավորների¹⁸:

Սոցիալական սիներգետիկայի համար կարևորություն է ներկայացնում ժամանակի՝ որպես սոցիալական բոլոր գործընթացները և իրադարձությունները օբյեկտիվորեն ընդգրկող սոցիալական կյանքի ընդհանրական բնորոշիչի արտացոլումն անհատական և սոցիալական գիտակցությունում:

ժամանակի ըմբռնումը և հասկացումը

համընդհանուր մարդկային փորձ են: Առանձին մարդիկ տարբերվում են «ժամանակի իրենց զգացմամբ»՝ իրադարձությունները սահմանելու, պահերն առանձնացնելու, ինչ-որ նպատակի հասնելու համար գործընթացի տևականությունը նախագգալու, գործընթացերը ինտերվալների բաժանելու միջոցով:

Սոցիոլոգիայի, իրավագիտության և պետականագիտության համար ժամանակի սոցիալ-հոգեբանական կամ մշակութային դրսևորումները էլ ավելի հետաքրքիր են: Դրանք «կարող են լինել սիմվոլները, արժեքները, կանոնները, ժամանակին ուղղված և խմբի, համայնքների, դասերի և այլ կոլեկտիվների, սոցիալական միավորների կողմից ընդունված կողմնորոշումներ: Դրանք դառնում են կարգավորված, արմատավորված սոցիալական գիտակցությունում կամ մշակութային մեք բերելով միջսուբյեկտային և նորմատիվ որակներ և ստեղծելով տարբեր հասարակությունների «ժամանակային պատկերներ»: Մշակութային նման ընդհանուր ուղղությունների կնիքը զգացվում է սոցիալական կյանքի տարբեր ոլորտներում՝ արտահայտված վարքագծի յուրահատուկ ոճով»¹⁹:

Երբ խոսքը ժամանակային կողմնորոշման կամ ժամանակային պատկերի մասին է, կարելի է տարանջատել հետևյալ ասպեկտները՝

1. ժամանակի իրազեկության մակարդակը,

2. ժամանակի իրազեկության խորությունը,

3. ժամանակի ուրվագիծը կամ ձևը՝ շրջանաձև, թե գծային,

4. շեշտադրումը անցյալին կամ ապագային,

5. ապագայի արտահայտման եղանակը: Սա կարող է դիտվել կամ որպես պասիվ հանդիպող, կամ որպես ակտիվորեն կառուցվող երևույթ,

6. գերակայող արժեքի շեշտադրումը կամ փոփոխության, նորարարության և ա-

ռաջընթացի վրա (առաջընթացի կողմնորոշում), կամ կրկնության, նույնականության և կարգի վրա (պահպանողական կողմնորոշում)²⁰:

Ժամանակի գործոնը կարող է մտնել հասարակության մշակույթ, սոցիալական խմբի կամ համայնքի մեջ ոչ միայն ժամանակային կողմնորոշման ընդհանուր իրավասությամբ, այլև նորմերի շատ ավելի յուրահատուկ ձևով (նորմատիվ սպասումներ)²¹, որոնք կարգավորում են մարդկային վարքագծի տարբեր ոլորտներ:

Նման կանոններ կարելի է գտնել ինչպես զանազան ինստիտուտների մեջ, այնպես էլ զանազան սոցիալ-պետական դերերում՝ յուրահատուկ սոցիալ-պետական դիրքորոշումներով: Ավելի կարճ՝ կարելի է ասել, որ ժամանակի հետ գործ ունեցող կանոնները սոցիալական նորմատիվ համակարգերում կառուցվածքայնորեն տարածված են կանոնների ավելի լայն ցանցերում:

Նման կանոնների մեկ կարևոր կատեգորիա է առանձնացրել Ռոբերտ Մերտոնը. այն կոչվեց «*սոցիալական ակնկալված տևողություն*»²²: Ըստ նրա՝ կան որոշակի կարևոր սոցիալական նորմեր, որոնք կազմում են «*սոցիալական կառուցվածքների և միջանձնային հարաբերությունների հիմնական ժամանակային բաղադրիչը*»²³: Նման նորմերը ներառված են սոցիալական կառուցվածքներում, պետական մարմիններում, կարգավորում են որոշակի գործողությունների տևականությունը: Իմաստն այստեղ միայն այն չէ, որ սոցիալական կյանքի որոշակի ձևեր տևում են երկար, քան մյուսները, այլ այն, որ գոյություն ունի նորմատիվ ակնկալիքներ, որոնց բնորոշում են, թե ինչքան պիտի դրանք տևեն, և նման նորմերից յուրաքանչյուր շեղում հասարակության կողմից դիտվում է որպես սանկցիա ենթադրող խախտում²⁴:

Եվ ընդհանրապես, ժամանակի գործառույթների²⁵ կարևորությունը փոփոխվում է մարդկային հասարակության, դրա ինստիտուտների և կազմակերպությունների,

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

դրանց անդամների առջև ծառայող խնդիրների և մարտահրավերների բարդացման և համալիրացման հետ զուգահեռ, քանի որ, «որքան մեծ է լինում խաղացողների փոխկապվածությունը, այնքան ավելի շատ է զգացվում ժամանակային սինխրոնացման անհրաժեշտությունը»²⁶, և ոչ միայն:

Սիներգետիկան համակարգային մոտեցման մեջ ներդրում է ժամանակի նոր հասկացում՝ տալով համակարգային մոտեցմանը նոր որակ՝ որպես տարբեր ժամանակների կոմունիկացիոն, շրջանաձև փոխկապվածության բազմազանություն, որը բովանդակում է նյութոսոցիալական մեխանիկայի դառնալի ժամանակը, Այնշտայնի հարաբերականության տեսության ազդանշանների փոխանակման ժամանակը, քառսից կարգի ձևավորման անդառնալի ժամանակը, որում, համաձայն Պրիգոժինի, առաջանում է «ժամանակի նետը»՝ ժամանակը, իսկ ավելի ճիշտ՝ տարբեր մշակույթներում դրա մասին պատկերացումը՝ պատմական, առանցքային, ըստ Կ. Յասպերսի՝ մարդկային քաղաքակրթության ժամանակը և, վերջապես, Ա. Բերգսոնի ժամանակը՝ մարդու սուբյեկտիվ փորձի, ապրումների ժամանակը²⁷:

Այս պայմաններում է, որ չպետք է անտեսել անհատական և/կամ սոցիալական հիշողության դերը, ինչը պայմանավորված է ժամանակով, և ինքն էլ իր հերթին զարգացման որոշակի փուլում պայմանավորում է ժամանակը: Քառսային ռեժիմում համակարգային հիշողությունը, ինչը ներառում է և՛ անհատական, և՛ հասարակական հիշողությունը՝ միասին վերցրած, գերլարված վիճակում է գտնվում: Այդ լարվածությունը հաղթահարելուց հետո, որի ժամանակ այդ հիշողությունից պահանջվում է ստեղծագործական մոտեցում և նորի արարում, կարծես թե համակարգն ինքն է իրենից «մաքրում» կամ այլ կերպ՝ հե-

ռացնում, մոռացության է մատնում, արխիվացնում է քառսային կեցությունում կուտակված հիշողությունը և արարված նորի ստեղծման բուն գործընթացի վերաբերյալ տեղեկատվությունը՝ պահպանելով միայն գործընթացի սկզբի և արդյունքի վերաբերյալ տեղեկություններ:

Հավանաբար դա է պատճառը, որ արդեն հարաբերական կայուն վիճակում գտնվողների համար նախկին կարգից քառսային անցման միջոցով նոր կարգի անցումը «կայծակնային» է թվում. նրանց ուղեղը, կարծես, իրենից հեռացնում է գերլարված վիճակում աշխատելու վերաբերյալ տեղեկատվությունը: Դրա համար էլ շատ դեպքերում համակարգի՝ հասարակության և պետության ներսում գտնվող դիտորդի համար համակարգը կատարում է թռիչքաձև զարգացում:

Ինչպես արդեն գիտենք, գիտությունում ընդունված է ժամանակի մի քանի տեսակ՝ արտաքին և օբյեկտիվ, ֆիզիկական և ներքին ժամանակ, սուբյեկտիվ և հոգեբանական, ինչպես նաև սոցիալական և պատմական ժամանակ²⁸: «ժամանակի սեղմման» ֆենոմենը, դրա ղեկավարման հնարավորությունը վերաբերում են ներքին, հոգեբանական ժամանակին, ինչպես նաև որոշակի առումով՝ սոցիալ-պատմական ժամանակին²⁹:

Այսպիսով, պետք է փաստել, որ հասարակական կարգի, պետահրավական փոփոխությունները հասարակության անկայունության և անցումայնության փուլում, երբ դրսևորվում է քառսի երևույթը, և համակարգը անցում է կատարում քառսի միջոցով դեպի նոր կարգավորվածություն, համակարգի ներսում գտնվողի համար տեղի են ունենում անկանխատեսելի, քառսային զարգացումներ, դիտորդը ժամանակի մեջ ընկալում և հասկանում է միայն փոփոխության սկզբնական և արդեն ավարտական որոշ փաստեր՝ տեղեկատվություն: Գործընթացի ամբողջ ընթացքը չընկալելու պատճառով դիտորդի համար առկա է լինում թռիչքաձև անցում, որի վրա

ինքը ներազդելու ոչ մի լծակ չունեն և չէր էլ կարող ունենալ, քանի որ քառսը հենց կամքից դուրս օբյեկտիվ երևույթ է:

Սակայն, ի նկատի ունենալով սիներգետիկայի «դիտարկելիության» սկզբունքը, կարծում ենք՝ իրականում քառսը ոչ թե օբյեկտիվ, այլ սուբյեկտիվ երևույթ է՝ կապված դիտորդի՝ համակարգի զարգացման ամբողջ դետերմինիստական շղթան ընկալելու անընդունակությունից: Ահա այս ժամանակի ընկալման սուբյեկտիվությունն է, որ կարող է ստեղծել ժամանակի մեջ սուբյեկտի դերի ինչ-որ կողմնորոշում:

Քանի որ դիտորդն ինքը համալիր, բարդ տեղեկատվական համակարգ է, նրա սուբյեկտիվ տարածությունն ու ժամանակն ինքնին ուրույն որակներ ունեն: Հարաբերած այն բանի հետ, ինչ տեղի է ունենում սուբյեկտիվ տարածության սահմաններից դուրս, և հարաբերած դիտորդի սուբյեկտիվ ժամանակի հետ չհամընկնող իրադարձությունների դինամիկային՝ իրականությունը վերացական, դիտորդից անկախ տարածությունը և ժամանակը չէ, այլ հենց դիտորդի ժամանակ:

«Վերացական» ֆիզիկական ժամանակի և մարդկային անհատի սուբյեկտիվ ժամանակի հարաբերակցության բացահայտումը թույլ է տալիս ոչ միայն լուծել ժամանակի սցինենտիկ և հակասցինենտիկ հայեցակարգերի հակասությունները³⁰, այլ նաև հաստատել կապ տեղեկատվական համակարգերի (կյանքի դինամիկա, հոգեբանության դինամիկա և այլն) և դրանց հիմքում ֆիզիկական գործընթացների միջև³¹:

Տեղեկատվության հետ անմիջականորեն կապված է բնական և հասարակական ինքնակազմակերպման գործընթացը: Ինչպես նշում է Ն. Վիները «պատահական մուտքին ոչ գծային համակարգերի արձագանքը մեզ տալիս է որոշակի սիներգետիկ գործունեության կազմակերպման ֆիզիոլոգիական գործընթացների հնարավորության բանալին»³²:

Հասարակության կեցույթում սիներգե-

տիկ զարգացումների մանրակրկիտ և հետևողական ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պատասխանելու, թե անցումային հասարակություններում ինչպես է տեղի ունենում պետականության ատրիբուտների առաջացումը կամ հետընթաց զարգացումը, որոնք շատ հաճախ դուրս են գտնվում մարդկային ծրագրավորված հսկողությունից, և որոնցում մեծ մասամբ կանխորոշիչ դեր են ունենում համակարգային հիշողության առանձնահատկությունները:

Հասարակական համակարգում գործող հետադարձ կապի շնորհիվ, ինչը սոցիալ-պետական կյանքում, որպես կանոն, առկա է զուտ այն պատճառով, որ սոցիալական համակարգերն ակտիվ տեղեկատվություն են կրում և պահպանում իրենց անցյալի մասին (հատկապես պետաիրավական պրակտիկայի ոլորտում), առաջանում է անխափան կապ անհետևանք չմնացած անցյալի, ընթացիկի և գալիքի միջև, որն արտահայտվում է անցյալի և ներկայի արդյունքների ապագային փոխանցման մեջ: Հասարակական համակարգի ակտիվ հիշողության մասն պայմաններում կարող է առաջանալ անցյալի, ներկայի և ապագայի միաժամանակյա և միաձուլված ներկայություն: Ժամանակի այս մակարդակների միաձուլված առկայության պայմաններում գերլարված համակարգային հիշողությունն ինքն է պայմանավորում բիֆուրկացիոն կետում ընտրությունը, որում մեծ դեր ունի համակարգային սկզբնական հիշողությունը, այլ կերպ՝ դրանից բխող վերաբերմունքը, որը պարունակում է համակարգի՝ որպես մեկ աբողջության ձևավորման պահին եղած, երբեմն նաև սոցիալ-պատմական զարգացման ընթացքում ձևավորված (ընթացիկ) վերաբերմունքը, արտաքին միջավայրից համակարգ ներթափանցող գործոններին, ինչպես նաև սեփական նպատակին, «առաքելությանը»: Այս վերջինս է, որ ի վիճակի է համակարգային քառսի սահմանային վիճակում բիֆուրկացիոն ընտրություն կատարելիս

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

ստեղծել կամ վերագտնել նոր կամ մոռացված ատտորակտոր և պայմանավորել սոցիալ-պետական կառուցվածքների հետագա զարգացումը:

Խնդիրն ավելի է բարդանում և համալիր դառնում 20 և 21-րդ դարերում, երբ սկզբնավորվում և ձևավորվում է «տեղեկատվական հասարակությունը», որը համարվում է մարդկային սոցիալական կեցության զարգացման հերթական մակարդակը³³: Գիտելիքի (անցյալի հիման վրա ստեղծված) և տեղեկատվության (ընթացիկ) փոխհարաբերության յուրահատկությունը տանում է այն բանին, որ «նոր անտրոպո-սոցիալ կառուցվածքի կարևորագույն բնութագրիչներից մեկը դառնում է «ժամանակից դուրս ժամանակը»³⁴, ինչը հակադրության մեջ է գտնվում ժամանակակից աշխարհում զարգացման տեղեկատվական ձևի վրա հիմնված հասարակությունում տարածաժամանակի սեղմման փաստարկների հետ»³⁵: Համաձայն Մ. Կաստելիի՝ ժամանակակից ցանցային հասարակությունը, կողմնորոշված լինելով դեպի «տեղեկատվականություն»՝ որպես զարգացման նոր միջոց, փորձում է ստեղծել «հավերժական տիեզերք», որտեղ ժամանակային սահմանափակումները առավել շատ ու շատ պիտի դուրս գան³⁶:

Սակայն մեզ այստեղ հետաքրքրում է ոչ այնքան էքզիստենցիալիստական փիլիսոփայության և հոգեբանության հարցերը, որքան ժամանակի սիներգետիկան՝ որպես մարդու կողմից կառուցված հատուկ իրականություն, որպես իրադարձություն-ընթացակարգային ամբողջություն՝ դրա կոնունիկատիվության չափականությունում: Վերոնշյալի լույսի ներքո կարելի է ասել, որ «ժամանակի դանդաղելու և սեղմման ֆենոմենները սկզբունքորեն ունեն հարաբերության իրադրությունների, մարդու՝ ինքն իր և այլ անձանց հետ հարաբերությունների, բնության և տրանսցենդենտալ սկզբի

հետ երկխոսության, անմիջականորեն կամ միջնորդավորված, սակայն ամեն դեպքում իրենում ներառող ինչպես տեղեկատվության փոխանակման հարաբերության պրակտիկան, այնպես էլ ձևավորվող սուբյեկտի հոգևոր պրակտիկան /«տրանսցենդենտալ էմպիրիզմ»/, միջանձնային հարաբերությունների տեմպորալ [ժամանկային] գելշտատի [կառուցվածք] փոփոխման միևնույն բնույթը»³⁷:

Ահա այս քառսի սահմանային վիճակում է, որ սոցիալական համակարգի հիշողությունը՝ անցյալի վերաբերյալ և ուղղված ապագային, որն այլ կերպ կարելի է անվանել հասարակության «առաքելություն», մտնում է ակտիվացման փուլ և պայմանավորում սոցիալ-պետական զարգացման բիֆուրկացիոն կետում նոր ատտորակտորի ընտրությունը, որը պարունակում է հասարակության ներսում առկա արխետիպային պատկերացումները, սկզբնական վերաբերմունքը պետականությանը և հասարակական, միջանձնային կյանքում դրա դերին, գործառույթներին և ընդհանրապես՝ առաքելությանը: Միգուցե սրանով է երբեմն պայմանավորվում որոշ հասարակություններում սոցիալական հեղափոխություններից հետո, որպես կանոն, առկա պետականության ճգնաժամերը և դրանից օգտվող որոշ քաղաքական ուժերի՝ հիմնականում դեմագոգիկ մեթոդների օգտագործմամբ պետական իշխանության գալու դեպքերը և հնարավորությունները, որոնք, այնուամենայնիվ, պետական իշխանության լեգիտիմացման տեսանկյունից ունենում են կարճ կյանք:

Եվ այստեղ պետք է նշել, որ քառսի սահմանային վիճակի ատտորակտորները ունեն իրենց առանձնահատկությունները. դրանք «բավական կայուն են իրենց և իրենց միջավայրի վերաբերյալ տեղեկատվություն պահպանելու համար, սակայն դեռևս բավական փոփոխվող (թրթռացող)՝ այդ տեղեկատվությունն օգտագործելու համար: Այս ատտորակտորները իրենց միջավայրի հետ փոխհարաբերվում են ար-

ծագանքման միջոցով. դրանով իսկ նրանք փոխհարաբերվում ու դառնում են իրենց միջավայրի մասը»³⁸:

Սակայն բիֆուրկացիոն կետում՝ բացի արխետիպային սկզբնական հիշողությունը կիրառելուց, որը, ինչպես նշեցինք, պայմանավորված է ժամանակով, և ինքն էլ իր հերթին զարգացման որոշակի փուլում պայմանավորում է ժամանակը, ատտրակտորի ընտրությունն իրականացնելիս պետք է գիտակցել տվյալ սոցիալական հանրության կողմից ժամանակի ընկալման առանձնահատկությունը, ինչն իրենից ներկայացնում է սոցիումի կողմից՝

1. ժամանակի իրազեկության մակարդակը. այսինքն՝ այն, թե սոցիալ-պետական համակարգի ներ և արտահամակարգային արագընթաց զարգացումները որքանով են ընկալվում հասարակության ուղղորդող խաղացողների կողմից. այլ կերպ՝ թե որքանով են առկա զարգացումները քառսային թվում խաղացողների համար,

2. ժամանակի իրազեկության խորությունը. այսինքն՝ այն, թե որքանով են կարողանում համակարգի հիմնական ուժերը գիտակցել անցյալի և ապագայի միաժամանակյա գոյությունը ներկայում. այլ կերպ՝ զարգացման հետագա ուղու ընտրության իրական սահմանների գոյությունը (տեզաուրուս),

3. ժամանակի ուրվագիծը կամ ձևը (շրջանաձև թե գծային), այսինքն՝ այն, թե զարգացման նոր ուղին ինչ-որ հնի նոր տարբերակն է լինելու, թե ամբողջությամբ մերժում և ստեղծում է համակեցության նոր համակարգ,

4. շեշտադրումը անցյալին կամ ապագային. այսինքն՝ այն, թե տեզաուրուսում առկա հնարավոր տարբերակներից ցանկալին ընտրելիս պետք է առաջնորդվել անցյալում կուտակած տեղեկատվությունից, վերաբերմունքից և ցանկություններից, թե ենթադրյալ առաքելությունից (որոնք երբեմն կարող են նույնանալ): «Այն ուղին, որով խմբի անդամները իրենց կա-

պակցում են անցյալին և ապագային, այսինքն՝ ժամանակային (տեսարանը, պատկերը) հեռանկարը, ընդհանուր առմամբ կախված է խմբի կառուցվածքից և գործառույթներից: ժամանակային տեսարանը հասարակության արժեքների ինտեգրալ մասն է, և անհատները ներկայում կողմնորոշում են իրենց գործողությունները և ձգտում դեպի ապագան՝ հենվելով խմբի վրա, որի արժեքները նա կիսում է»³⁹,

5. ապագայի արտահայտման եղանակը. այսինքն՝ գերակայող արժեքի շեշտադրումը կամ փոփոխության, նորարարության և առաջընթացի վրա (առաջընթացի կողմնորոշում), կամ կրկնության, նույնականության և կարգի (պահպանողական կողմնորոշում):

Վերոնշյալի լույսի ներքո կարելի է փաստել, որ սոցիալական համակարգի զարգացման անցումային փուլը, որում դրսևորվում են անկայունության երևույթը և ոչ գծային զարգացումները, այլ կերպ՝ քառսային ռեժիմը ոչ այլ ինչ է, քան հարաբերականորեն կարճ ժամանակահատվածում համալիր համակարգում չափազանց մեծաքանակ, բազմամակարդակ պայմանականությունների, փոխհարաբերությունների առկայություն և անցումային ու անկայուն հասարակական համակարգերում՝ արագացող գործընթացների պայմաններում, ժամանակի ընկալումը փոխվում է. տեղի է ունենում ժամանակի սեղմման երևույթը: Այս իրավիճակներում, կախված տվյալ սոցիումի կողմից ժամանակի ընկալման առանձնահատկությունից, երևույթների նկատմամբ սոցիալական սկզբնական հիշողությունը, գրգռվելով ընթացիկ հիշողության կողմից, արթնացնում է որոշ պատկերացումներ, հասկացություններ, վերաբերմունք, արխետիպեր, որոնք էլ համակարգի զարգացման բիֆուրկացիոն (ճյուղավորման) կետում պայմանավորում են սոցիալ-պետական համակարգի զարգացման ընտրությունը:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ**ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ**

- ¹ St'u Ilya Prigogine, Isabelle Stengers, Order Out of Chaos: men's new dialogue with nature, Bantam Books, 1984, կամ Пригожин И., Стенгерс И., Порядок из хаоса: Новый диалог человека с природой. М., "Прогресс", 2003, էջ 49:
- ² St'u Князева Е.Н. Одиссея научного разума. М., 1995., էջ 83, մեջբերումն ըստ Честнов И.Л. Современные типы правопонимания: феноменология, герменевтика, антропология и синергетика права. Учебное пособие. СПб., 2001, часть 4:
- ³ St'u Честнов И.Л., նշված աշխատությունը:
- ⁴ St'u Пригожин И., Стенгерс И., Время, Хаос, Квант, Москва, 1994, էջ 9:
- ⁵ St'u, *Кастельс М.*, Информационная эпоха. Экономика, общества и культура. Москва, 2000, էջ 39:
- ⁶ Մեջբերումն ըստ *Рассел Б.*, Мудрость Запада. Москва, "Республика", 1998. էջ 51:
- ⁷ St'u *Е. Н. Князева*, Овладение временем и управление коэволюционной сложностью, Новости науки и техники, Гипотезы и предположения, **15 декабря 2009**, էջ 52: St'u նաև <http://oko-planet.ru/science/science-news/26349-en-knyazeva-ovladenie-vrememem-i-upravlenie.html>
- ⁸ St'u J. T. Fraser, *Genesis and Evolution of Time*, Brighton: The Harvester Press, 1982.
- ⁹ St'u П. О. Лукша, *Роль памяти в субъективном времени сложных систем*, / Сборник работ конференции «Феномен времени». Москва, "Дельфис", 2004, էջ 166:
- ¹⁰ St'u Giddens Anthony, *Central Problems in Social Theory*. London: Macmillan, 1979: 3, էջ 202:
- ¹¹ St'u Adam Barbara, *Time and Social theory*. Cambridge: Polity Press. 1990, էջ 2:
- ¹² St'u նույն տեղում, էջ 9:
- ¹³ St'u Pitirim A. Sorokin, *Social and Cultural Dynamics*, vol. 1. New York: American Book Company, էջ 156:
- ¹⁴ St'u Piotr Sztompka, *The Sociology of Social Change*, Blackwell, Oxford UK & Cambridge USA, 1994, էջ 41:
- ¹⁵ St'u Adam Barbara, նշված աշխատությունը, էջ 29:
- ¹⁶ St'u Anthony Giddens, նշված աշխատությունը, էջ 199:
- ¹⁷ St'u Piotr Sztompka, նշված աշխատությունը, էջ 44:
- ¹⁸ St'u Piotr Sztompka, նույն տեղում, էջ 45:
- ¹⁹ St'u Piotr Sztompka, նույն տեղում, էջ 47:
- ²⁰ St'u Piotr Sztompka, նույն տեղում, էջ 48:
- ²¹ Իրավաբանության մեջ դրա լավագույն արտահայտությունը օրենսդրության պահանջվող "իրավական որոշակիության" դոկտրինի և դրանցի բխող վարքագծի իրավական հետևանքները կամխատեսելու հնարավորության առկայությունն է:
- ²² St'u Robert K. Merton, "Social expected durations: a temporal component of social structure", San Francisco: American Sociological Association (mimeo), 1982c.
- ²³ St'u Robert K. Merton, "Social Theory and Social Structure", New York: Free Press, 1968, էջ 365-166:
- ²⁴ St'u Piotr Sztompka, նշված աշխատությունը, էջ 49:
- ²⁵ Սոցիալական ժամանակի գործառույթներն են՝ ա. գործողությունների սինխրոնացում, բ. կոորդինացիա, գ. կարգավորում-դասակարգում, դ. ժամանակացուցավորում, ե. չափում, զ. տարբերակում: - Piotr Sztompka, նշված աշխատությունը, էջ 50-53:
- ²⁶ David J. Lewis and Andrew j. Weigart, "The Structure and meanings of social-time", 1990 in John Hassard (ed.), "The Sociology of time", London, Macmillan, 1990, էջ 92:
- ²⁷ St'u В. И. Аршинов, Н. Г. Савичева, *Гражданское Общество в контексте синергетического подхода*, Общественные науки и современность, 1999, N. 3, էջ 132:
- ²⁸ St'u Любинская Л.Н., Лепилин С.В. *Философские проблемы времени*. Москва. Прогресс, Традиция. 2002:

- ²⁹ Տե՛ս Արшинов В. И., Синергетика времени // Синергетика времени.– М.: Репроникс, 2007.– էջ 6:
- ³⁰ Տե՛ս Казарян В. П., Понятие времени в структуре научного знания. Москва, МГУ, 1980:
- ³¹ Лукша, П. Роль памяти в субъективном времени сложных систем. / Сборник работ конференции «Феномен времени». М.: Дельфис, (2004), էջ 170:
- ³² Տե՛ս Винер М., Мое отношение к кибернетике: Ее прошлое и будущее. — Москва, 1969, էջ 19-20:
- ³³ Տե՛ս Alvin Tofler, The Third Wave, Bantam Books (edition), 1981:
- ³⁴ Հասկացությունը գիտական շրջանառություն է մտցրել Մ. Чашаутելսը:
- ³⁵ Արшинов В. И., նշված աշխատություն, էջ 4:
- ³⁶ Տե՛ս *Кастельс М.*, Информационная эпоха. Экономика, общества и культура. Москва, 2000, մեջբերումն ըստ Արшинов В. И., նշված աշխատություն, էջ 5:
- ³⁷ Можейко М.А. «После времени»: Проблема темпоральности человеческого бытия в постмодернизме.// Время как фактор изменений личности. Под ред. А.В. Брушлинского и В.А.Поликарпова. Минск 2003, էջ 155-175:
- ³⁸ Russ Marion, The Edge of Organization, Chaos and Complexity Theories of Formal Social Systems, SAGE Publications, Thousand Oaks, London, New Delhi, 1999, էջ 82:
- ³⁹ Coser Lewis A. and Coser Rose, “Time perspective and social structure”, 1990, 191-2, in Hassard John (ed.), The Sociology of Time, London: Macmillan, 1990, էջ 191-201: - Օրինակ՝ ամերիկյան հասարակությունը սովորաբար համարվում է դեպի ապագա կողմնորոշված, մինչդեռ հեռավորարևելյան ժողովուրդները օգտագործում են ներկան՝ որպես կիզակետ, որից կեցությունը տարածվում է երկու ուղղություններով, էջ 192:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆԵՐ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

**РОЛЬ ВОСПРИЯТИЯ ВРЕМЕНИ И НАЧАЛЬНОЙ И
ТЕКУЩЕЙ ПАМЯТИ
В НЕСТАБИЛЬНЫХ И ПЕРЕХОДНЫХ ОБЩЕСТВАХ**

Тарон СИМОНЯН

*Соискатель кафедры Теории и истории
государства и права ЕГУ*

Человеческое общество является самоорганизующейся открытой системой и всегда находится в процессе трансформации. В настоящее время одним из наиболее важных особенностей социально-государственной систем и, в целом, человеческой жизни является революционный темп изменения, из-за растущей сложности в сфере человеческих отношений и растущего информационного общества, как его результат.

В этих обстоятельствах восприятие времени, в зависимости от уровня и глубины сознания, формы и образа времени, акцента на прошлое или будущее, способов познания бу-

дущего, становится решающим фактором в процессе исследования эволюции социально-государственных систем.

Имея в виду все это, можно заметить, что переходный период, когда социальные системы нестабильны и находятся в нелинейной динамике (хаос), есть не что иное, как наличие обширных и многоуровневый условий, отношений в сложных социально-государственных систем, где временное восприятие изменяется, и время начинает сжиматься. В этих условиях социальная начальная память, возбуждаясь текущей памятью, пробуждает некоторые отношения, идеи, архетипы, и т.д., которые определяют выбор развития социально-государственной систем в момент бифуркации.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Եղիշե ԿԻՐԱՎՈՍՅԱԼ

ՀՀ վարչապետի օգնական, Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոնի տնօրեն ԵՊՀ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ.

ԱճՆԱ ՄԱԹԵՎՈՍՅԱԼ

ԵՊՀ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ.

Միջազգային և ներպետական իրավունքների հարաբերակցության հիմնահարցը միջազգային իրավունքի կարևոր հիմնախնդիրներից է: Ներկայումս դժվար է պատկերացնել որևէ պետություն, որը կկարողանա գոյատևել մեկուսի՝ առանց միջազգային հանրության հետ հարաբերվելու: Այդ իսկ պատճառով միջազգային իրավունքի կիրառման արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն միջպետական հարաբերություններում այն պահպանելուց, այլ նաև միջազգային իրավունքի հիմնական սուբյեկտներ հանդիսացող պետությունների ազգային իրավական համակարգերի շրջանակում միջազգային իրավական նորմերի իրացումից: Գլոբալացման ներկայիս պայմաններում պետությունների փոխհարաբերության եզրերը ավելի են ընդարձակվում, որը առաջացնում է տվյալ հարաբերությունների իրավական կարգավորման մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտություն:

Այնպիսի է, որ նման պայմաններում պետությունների համագործակցությունը կարգավորող հիմնական գործիքը միջազգային իրավունքի առաջնային աղբյուրը՝

միջազգային պայմանագիրն է: Դա էլ պայմանավորում է միջազգային պայմանագրի՝ որպես միջազգային իրավական նորմեր ամրագրող առաջնային գործիքի դերի և նշանակության ուսումնասիրման անհրաժեշտությունը: Իսկ թե ինչպես են ապահովվում միջազգային պայմանագրային պարտավորությունների կատարումը պետության շրջանակներում, արդեն սահմանվում են պետության ներքին օրենսդրական ակտերով, որոնք ոչ միայն որոշում են միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցման եզրերը, այլև պետության կողմից միջազգային պայմանագրերի ապահովման կոնկրետ մեխանիզմները:

Միջազգային պայմանագրային ներպետական գործընթացը սահմանող օրենքների փոփոխման անհրաժեշտություն կարող է առաջանալ հաճախ: Սակայն, օրենսդրի հիմնական խնդիրներից մեկն էլ այն է, որ ընդունված օրենքները լինեն հնարավորինս կատարյալ, իրավական ու կիրառելի և, որ պակաս կարևոր չէ, կայուն:

«ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 2007թ. փետրվարի 22-ին: Օրենքում առկա են բազմաթիվ բացեր և վիճահարույց դրույթներ, որոնցից մի քանիսը կփորձենք ներկայացնել սույն հոդվածում: Քանի որ օրենքում առկա խնդիրները և բացթողումները բազմաթիվ են, այստեղ մենք կներկայացնենք միայն միջազգային պայմանագիր հասկացությանը և միջազգային պայմանագիր կնքելու իրավասություն ունեցող կազմավորումներին առնչվող հիմնահարցերը և դրանք լուծելու հնարավոր ուղիները:

Համաձայն Վիեննայի կոնվենցիայի 6-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր պետություն

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ

իրավասու է կնքելու միջազգային պայմանագիր: Վերջինս միջազգային իրավունքի սուբյեկտների միջազգային իրավասուբյեկտության կարևոր գործոն է:

Ըստ գերմանացի իրավաբան Ֆ. Բերբերի՝ «Միջազգային պայմանագիրը միջազգային իրավունքի առնվազն երկու սուբյեկտների համաձայնեցված կամահայտությունների գիտակցված և կամավոր միավորումն է, որը միտված է իրավահարաբերություններ ստեղծելու, փոփոխելու ու դադարեցնելու»¹: Իսկ անգլիացի իրավաբան Ջ. Ֆիցմորիսը տալիս է միջազգային պայմանագրերի հետևյալ ձևակերպումը. «Միջազգային պայմանագիրը միջազգային համաձայնություն է, որն արտացոլված է միասնական ձևական ակտում (անկախ նրա անվանումից, վերնագրից կամ նշանակությունից), կնքված է այն կողմերի միջև, որոնք բոլորն էլ կամ որոնցից երկուսը միջազգային իրավունքի սուբյեկտներն են, օժտված են միջազգային պայմանագրեր կնքելու միջազգային իրավասուբյեկտությամբ և իրավունակությամբ, որոնց նպատակն է ստեղծել իրավունքներ և պարտականություններ կամ սահմանել միջազգային իրավունքով կարգավորվող հարաբերություններ»²: Նշված հասկացությունները հիմնականում համապատասխանում են Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի կոնվենցիայով տրված բնորոշմանը, համաձայն որի՝ «միջազգային պայմանագիրը պետությունների միջև գրավոր կնքված և միջազգային իրավունքով կարգավորվող միջազգային համաձայնություն է, անկախ այն բանից, թե այդ համաձայնությունը ներարված է մեկ, երկու կամ մի քանի փոխկապակցված փաստաթղթերում, ինչպես նաև նրա որոշակի անվանումից»: Սուբյեկտային կազմի առումով՝ միջազգային պայմանագիր հասկացության շրջանակներն ընդլայնվեցին 1986 թ. Վիեննայի կոնվենցիայով՝ լրացնելով պայմանագրային իրա-

վասուբյեկտությամբ օժտված կազմավորումների ցանկը միջազգային միջպետական կազմակերպություններով:

Վերը նշվածի հիման վրա կարելի է փաստել, որ «միջազգային պայմանագիր» հասկացությունը պետք է ունենա հետևյալ հիմնարար բաղադրատարրերը՝

1. պայմանագրի կողմերը միջազգային իրավունքի սուբյեկտներ են, որոնք օժտված են **միջազգային իրավասուբյեկտությամբ**³ կամ որպես **նվազագույն պահանջ՝ պիտի օժտված լինեն միջազգային պայմանագիր կնքելու իրավունակությամբ**,

2. միջազգային պայմանագրերը ստեղծում են միջազգային իրավունքի նորմեր, որոնք կողմերի համար առաջացնում են **իրավունքներ և պարտականություններ**,

3. ժամանակակից միջազգային պայմանագիրը **ձևակերպվում է գրավոր**,

4. պայմանագիրը պետք է **կարգավորվի միջազգային իրավունքով**:

Սակայն, շատ դեպքերում պետությունները շեղվում են նշված չափանիշներից՝ տալով միջազգային պայմանագրի կամայական սահմանումներ՝ երբեմն դուրս գալով միջազգային իրավունքի սահմաններից: Նման մոտեցում, ցավոք, որդեգրել է նաև ՀՀ օրենսդիրը:

Ներկայացնենք օրենքի կիրառման հիմքը հանդիսացող հասկացությունների և տարբեր միջազգային իրավական եզրույթների նկատմամբ օրենսդրի ընդունած անհաջող սահմանումներին առնչվող խնդիրներից մի քանիսը:

Նախ, օրենքի խանիճադանջության գործում մեծ դեր է խաղացել օրենքի հիմնական հասկացություններին վերաբերող հոդվածի բացակայությունը: Համակարգային այս բացթողումը զգալիորեն նվազեցնում է օրենքի կիրառման արդյունավետությունը: Նման հոդված, օրինակ, ամրագրված է Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերի մասին օրենքում:

Օրենսդիրը միջազգային պայմանագրի բնորոշումը տալիս է 2-րդ հոդվածում, որը

սահմանում է հետևալը. «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով և միջազգային հանրային իրավունքի նորմերով (այսուհետ՝ միջազգային իրավունք) սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության և միջազգային իրավունքի սուբյեկտի, ինչպես նաև սույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կազմակերպության կամ միավորման միջև ստորագրված և սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած և Հայաստանի Հանրապետության համար պարտադիր դարձած գրավոր համաձայնություն է»:

Այս հոդվածը առաջ է բերում մի շարք վիճահարույց խնդիրներ, որոնց կփորձենք անդրադառնալ ստորև: Օրենքը նույն՝ 2-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ և երրորդ պարբերությունները սահմանում է հետևյալը.

«...Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր է համարվում նաև ուժի մեջ մտած այն միջազգային պայմանագիրը, որին Հայաստանի Հանրապետությունը միացել է սույն օրենքով և միջազգային իրավունքի նորմերով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր է համարվում նաև սույն օրենքով սահմանված կարգով կնքված միջազգային պայմանագրում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին պայմանագիրը»:

Մեր խորին համոզմամբ, առանձին անդրադառնալ ՀՀ միջազգային պայմանագրերին՝ դրանք «ՀՀ միջազգային պայմանագիր» եզրույթի մեջ ներառելու նպատակով, անհնաստ է: Ջուտ օրենսդրական տեխնիկայի և տարրական տրամաբանության կանոնների տեսանկյունից, անհրաժեշտություն չկա այս դրույթը նախատեսել, քանի որ նույն հոդվածի առաջին մասի առաջին պարբերության մեջ ամրագրված հասկացությունն արդեն իսկ ներառում է բոլոր միջազգային պայմանագրերը, ո-

րոնք Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ են մտել: Ավելին, օրենսդիրը, դուրս գալով ներպետական իրավունքի կարգավորման շրջանակներից, 2-րդ հոդված առաջին մասի երրորդ պարբերությամբ սահմանում է. «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր է համարվում նաև սույն օրենքով սահմանված կարգով կնքված միջազգային պայմանագրում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին պայմանագիրը»: Այն հանգամանքը, թե այս կամ այն միջազգային պայմանագրում փոփոխությունների կատարումը ինչ իրավական ձևով պետք է իրականացվի ոչ թե ներպետական, այլ իրավունքի կարգավորման խնդիր է: Նշված դրույթը հակասում է 1969 թ. Վիեննայի կոնվենցիայի 39-րդ հոդվածին, համաձայն որի՝ պայմանագիրը կարող է փոփոխության ենթարկվել կողմերի համաձայնությամբ: Կոնվենցիայի երկրորդ մասի դրույթները, որոնք վերաբերում են պայմանագրի կնքմանը և ուժի մեջ մտնելուն, կիրառվում են նման համաձայնության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Նման դրույթից ակնհայտ է, որ Վիեննայի կոնվենցիան հնարավորություն է ընձեռում փոփոխել պայմանագիրը նաև այսպես կոչված «արտապայմանագրային» եղանակով: Այսպես, խոսելով միջազգային պայմանագրերում կատարվող փոփոխությունների իրավական ձևի մասին՝ ռուս միջազգայնագետ-իրավաբաններ Ա.Ն. Տալալանը և Ն.Վ. Չախարովան մատնանշում են, որ միջազգային իրավունքում գոյություն չունի որևէ նորմ, որը մասնակից պետություններից կպահանջի օգտագործել փոփոխվող պայմանագրի նույն ձևը, անվանումը և մակարդակը: Պայմանագիրը որպես կանոն պարունակում է դրույթներ, որոնք հենց վերաբերում են փոփոխումներ և/կամ լրացումներ կատարելուն: ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովը նույնիսկ նախատեսում է միջազգային պայմանագրի փոփոխման բանավոր եղանակ, այդ թվում՝ պետութ-

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

յունների պրակտիկայի արդյունքում: Այլ կերպ ասած՝ միջազգային պայմանագրի փոփոխման կարգն ամրագրող դրույթի նախատեսումը նախ անհմատ է, քանի որ այն դատապարտված է անգործության այն պարզ պատճառաբանությամբ, որ խնդիրը միջազգային իրավունքի կարգավորման առարկա է, երկրորդ՝ գոյություն ունի ակնհայտ անհամապատասխանություն Վիեննայի 1969թ. կոնվենցիայի դրույթի և հիշատակված հոդվածի միջև, իսկ համաձայն 33 Սահմանդրության 6-րդ հոդվածի «դուալիստական» մեկնաբանության՝ նման հակասության պարագայում կիրառման է ենթակա միջազգային պայմանագրային դրույթը: Ավելին, դրույթը պրակտիկ իրավիճակում կարող է առաջացնել բազմաթիվ բարդություններ, հատկապես երբ պայմանագրի մյուս կողմը կիրառում է պայմանագրի փոփոխման առավել պարզեցված ընթացակարգեր: Առաջարկում ենք ընդհանրապես հանել նշված դրույթը և փաստաթուղթը միջազգային պայմանագիր բնորոշելիս ղեկավարվել մայր պայմանագրի դրույթներով կողմերի համաձայնությամբ կամ, դրանց բացակայության դեպքում, միջազգային իրավունքով:

